ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«06» Հոկտեմբեր 2025թ. ՆՄՈ/529-Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 20-ի N340-Ն որոշման 3-րդ կետով հաստատված N7 հավելվածի 23–րդ կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրի 4-րդ փողոցի NN 1 և 3 բազմաբնակարան վթարային շենքերի բնակարաններում փաստացի բնակվող, տիրապետող կամ օգտագործող բնակիչների՝ շահառուների կողմից ձեռք բերվող բնակարանի (բնակելի տան) ընտրված տարբերակի՝ մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանությունը ուսումնասիրելու և եզրակացություն տրամադրելու համար.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Խորեն Սարուխանյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանից և

Քաղաքաշինության, տեխնիկական, հրդեհային անվտանգության տեսչական մարմնից (համաձայնությամբ):

3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Խորեն Սարուխանյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (ավագ մասնագետ Անուշ Պողոսյան) սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-05-06 17:42:44 GMT+4
Հանրային ծառայությունների կոմիտե
eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի մայիսի 06-ի
N ՄՈ/529-Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության
և ենթակառուցվածքների կառավարման վարչություն,
գլխավոր ինժեներ՝ Խորեն Սարուխանյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչություն,
գլխավոր ճարտարագետ-շինարար՝ Ռաֆիկ Երվանդյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի ղեկավարի օգնական՝ Արմեն Աբգարյան

Քաղաքաշինության, տեխնիկական,
հրդեհային անվտանգության տեսչական մարմին,
գլխավոր մասնագետ՝ Գագիկ Գևորգյան

06.05.2025

VERIFIED OCSP 06.05.2025 17:35:03 GMT+4
Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***